ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ ընկերությունը ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի անդեզիտադացիտների հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 16.05.2013թ.-ի ՆԾԱԹՎ-29/453 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Թալինի անդեզիտադացիտների հանքավայրի մեր ընկերությանը հատկացված տարածքում իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ

/ տնօրեն՝ Digitally signed by GRIGORYAN TONAKAN 1711600369 Date: 2026.02.17 03:13:14 AMT Ա. Մկրտչյան

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկում-ների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականու-թյունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ[1] | Բացահանք | Փոշի | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.046մգ/մ$^3$ |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Լցակույտի տարածք<br>Արտադրական հրապարակ | Նավթա-մթերքներ | Նմուշարկում, նմուշի լաբորատոր հետազոտություն | 2025 թվականի ընթացքում | Նավթամթերք-ների արտահոսքի հետքեր չի դիտարկվել |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Հանքավայրի և հարակից տարածք | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ | Դիտարկում դաշտային պայմաններում | 2025 թվականի ընթացքում | Տարածքի դիտարկման ժամանակ չեն արձանագրվել: |
| Աղմուկ և թրթռում | Բացահանք | Ծանր | Չափիչ սարքերի | 2025 թվականի | նախատեսված չէ |

[1] Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մինչև տասը հազար բնակչության դեպքում փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկայի տեղաշարժ | կիրառում | ընթացքում | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում | | | | |